# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## 2019 թվականի հուլիսի 29-31-ը
## ք. Մոսկվա /Ռուսաստանի Դաշնություն/ գործուղման արդյունքների մասին

**1. Անուն, ազգանուն՝**

Նաիրա Կարապետյան

**2. Զբաղեցրած պաշտոնը՝**

Էկոնոմիկայի նախարարության Եվրասիական տնտեսական միության և արտաքին առևտրի վարչության պետ

**3. Գործուղման վայրը և ժամկետը՝**

ք. Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2019 թվականի հուլիսի 29-31-ը

**4. Հրավիրող կողմը՝**

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նախաձեռնությամբ

**5. Գործուղման նպատակ**

Եվրասիական տնտեսական միության ու անդամ պետությունների և Իսրայելի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) կնքման շուրջ բանակցությունների չորրորդ փուլին մասնակցելու նպատակով

**6. Քննարկված թեմաները՝**

Եվրասիական տնտեսական միության ու անդամ պետությունների և Իսրայելի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին Համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների չորրորդ փուլի ընթացքում քննարկվել են վերոհիշյալ Համաձայնագրի նախագծի առանձին բաժիններ, մասնավորապես՝ իրավական և հորիզոնական պարտավորությունները, փոխադարձ առևտրի դյուրացումն ու խթանումը, առևտրի պաշտպանիչ միջոցները, մրցակցային քաղաքականությունը, էլեկտրոնային առևտուրը, պետական գնումները, ծագման երկրի որոշման կանոնները, մաքսային համագործակցություն և այլ բնագավառներին առնչվող խնդիրներ: Համաձայնագրի շուրջ վարվող բանակցությունների ընթացքում հիմնականում քննարկվել են Համաձայնագրին կից ցանկերը, որոնց մեջ ներառված ապրանքատեսակների հանդեպ Կողմերը պատրաստ են տրամադրել սակագնային արտոնություններ, ինչպես նաև նշված ցանկերում ներառված ապրանքների ծագման

երկրի որոշման չափորոշիչները: Վերոհիշյալ ցանկերում հայկական կողմից ներկայացվել են ՀՀ համար արտահանման հետաքրքրություն ունեցող մի շարք ապրանքատեսակներ:

Համաձայնագրի նախագծի լրամշակված տարբերակը՝ ըստ բաժինների, քննարկումների արդյունքում համաձայնեցված էր Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների համապատասխան փորձագետների միջև կայացած խորհրդակցությունների ժամանակ:

**7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Համաձայնագրի շուրջ քննարկումներին մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների, ինչպես նաև Իսրայելի Հանրապետության առանձին ոլորտների մասով փորձագետներ:

Ոլորտային քննարկումների ժամանակ ներկայացվել են Կողմերի հիմնական տարաձայնությունները՝ Համաձայնագրի նախագծի առանձին բաժինների վերաբերյալ և արդյունքում մի շարք հարցերի ուղղությամբ կողմերի միջև ձեռք է բերվել համաձայնություն:

Մասնավորապես՝

**Իրավական և հորիզոնական պարտավորությունները գլխի** քննարկման ժամանակ Կողմերը մանրամասն քննարկեցին «Ընդհանուր դրույթներ», «Համաձայնագրի վարչարարություն», «Թափանցիկություն», «Եզրափակիչ դրույթներ» և «Բացառություններ» հոդվածները, բացառությամբ «Վեճերի կարգավորում» հոդվածի, որի քննարկումը տեղի էր ունեցել բանակցային չորրորդ փուլի նախապատրաստման նպատակով կայացած փորձագիտական քննարկումների ընթացքում:

Համաձայնագրի վաչարարության մասով հիմնական հարցերից էր ստեղծվող Համատեղ կոմիտեին վերապահել իրավասություն Համաձայնագրում կատարվող տեխնիկական փոփոխություններին հավանություն տալու վերաբերյալ: Վերոնշյալ հնարավորության տրամադրման նպատակահարմարությունը հավանության արժանացավ երկու Կողմերից՝ վերջիններիս կողմից կիրառվող իրավական նորմերի պարտադիր պահպանման պահանջի առկայության դեպքում:

Ինչ վերաբերում է բացառություններին, մասնավորապես անվտանգության նկատառումներից բխող, ապա պայմանավորվածություն ձեռք բերվեց նշված քննարկումներում ներգրավել նաև Եվրասիական տնտեսական միության և Իսրայելի պատվիրակությունների ղեկավարներին՝ նշված հարցերի շուրջ բանակցող կողմերի անհամաձայնության պատճառով:

Բանակցային չորրորդ փուլի ընթացքում Կողմերը քննարկեցին **Ապրանքների առևտուր գլխի** հոդվածների գերակշիռ մասը: Մի շարք հոդվածներ և դրանց դրույթներ

ամբողջությամբ համաձայնեցվեցին, իսկ մնացածի մասով առաջարկվեցին այլընտրանքային որոշումներ, որոնք նախատեսվում է դիտարկել բանակցային հետագա փուլերի ընթացքում:

Սակագնային բանակցությունների ընթացքում քննարկվեցին կողմերի արտահանման հետաքրքրություն ունեցող ապրանքների այն ցանկերը, որոնց փոխանակումը տեղի էր ունեցել մինչև բանակցային փուլի մեկնարկը: Քննարկումների արդյունքում Կողմերը եզրահանգեցին, որ Համաձայնագրի շուրջ աշխատանքները շարունակելու համար անհրաժեշտ է կենտրոնանալ արտահանման հետաքրքրություն ներկայացնող ապրանքների ավելի սահմանափակ ցանկի վրա:

**Ապրանքների ծագման երկրի որոշման** գլխի մասով Կողմերը մանրամասն քննարկեցին ապրանքների ծագման փաստաթղթային հաստատմանը վերաբերող դրույթները: Իսրայելական կողմն առաջարկեց հրաժարվել թղթային կրիչով ապրանքի ծագման սերտիֆիկատի բնօրինակի ներկայացման անհրաժեշտությունից: ԵԱՏՄ պատվիրակության ներկայացուցիչներն առաջարկեցին ստեղծել ծագման սերտիֆիկացման և հավաստման էլեկտրոնային համակարգ, որը հիմնված կլինի տրամադրված ապրանքների ծագման սերտիֆիկատների մասով կողմերի իրավասու և մաքսային մարմինների միջև տեղեկատվության փոխանակման վրա:

**Առևտրային պաշտպանիչ միջոցներ գլխի** մասով Կողմերը քննարկել են մինչև հոդված 7.4.1-ը ներառյալ: Մնացած մասի քննարկումը նախատեսվում է իրականացնել տեսակոնֆերանսի ձևաչաձով ս/թ սեպտեմբերի 2-րդ կեսին: Չհամաձայնեցված դրույթների մասով կողմերը պահպանել են իրենց կողմից նախկինում ներկայացված դիրքորոշումները, ընդ որում բանակցային փուլի ընթացքում միմյանց տրամադրել են լրացուցիչ պարզաբանումներ և պայմանավորվել շարունակել աշխատանքը այլընտրանքային լուծումների մասով:

**Մաքսային համագործակցություն գլխի** քննարկման արդյունքում Կողմերի միջև համաձայնություն ձեռք բերվեց մաքսային գործերի մասով վարչարարական համագործակցության արձանագրության նախագծի վերաբերյալ: Վերոնշյալ նախագծի չհամաձայնեցված հարցերից մեկն է Միության կողմից առաջարկված մաքսային մարմնի կողմից կատարված հարցմանը պատասխանելու ժամկետի սահմանումը:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Բանակցությունների ընթացքում Կողմերի միջև ստորագրվեց Եվրասիական տնտեսական միության ու անդամ պետությունների և Իսրայելի Հանրապետության միջև

ազատ առևտրի մասին Համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների չորրորդ փուլի արդյունքներով կազմված Արձանագրություն:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Համաձայնագրի տեքստի չհամաձայնեցված հոդվածների մասով առաջարկվեց, որ կողմերն անցկացնեն լրացուցիչ միջխորհրդատվական քննարկումներ:

Կողմերի միջև ձեռք բերվեց պայմանավորվածություն առ այն, որ Համաձայնագրի շուրջ բանակցությունների հերթական հինգերորդ փուլը տեղի կունենա ս/թ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ք. Երուսաղեմում:

**10. Ստորագրությունը, ամսաթիվը.**

Էկոնոմիկայի նախարարության
Եվրասիական տնտեսական միության
և արտաքին առևտրի վարչության պետ
Նաիրա Կարապետյան

05.08.2019 թ.